



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » մարտի 2015թ.

N 09

ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության
կառուցվածքը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 28-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի համաձայն

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կառուցվածքը (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել ԼՂՀ գլխավոր դատախազության կազմակերպա-վերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնի վրա:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազի 2009 թվականի հունվարի 08-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 01 հրամանը:

4. Հրամանն ուղարկել ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալներին, ԼՂՀ գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, բաժինների պետերին, ԼՂՀ քաղշրջդատախազներին և ԼՂՀ դատախազության աշխատակազմի ղեկավարին:

5. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական

Ա.Ա.Մոսիյան

Հաստատված է Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության Գլխավոր դատախազի
2015 թվականի մարտի 02-ի թիվ 09 հրամանով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

դատախազության կառուցվածքը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազ
2. Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության Գլխավոր դատախազի տեղակալներ
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության դատախազ
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժին
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժին
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժին
8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժին
9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժին
10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպավերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժին
11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի դատախազություն
12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի դատախազություն
13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի դատախազություն
14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հարդութի շրջանի դատախազություն
15. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտի շրջանի դատախազություն
16. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շահումյանի շրջանի դատախազություն
17. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի դատախազություն
18. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի դատախազություն